Հավելված N 1
ՀՀ կառավարության 2021 թվականի
նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Քաղաքաշինության կոմիտե

| NN | Նպատակ | Միջոցառումներ | Ակնկալվող արդյունք | Համակատարող | Ժամկետ | Ֆինանսավորման աղբյուր և կանխատեսվող չափ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Տարածքային մակարդակում պետական քաղաքաշինական քաղաքականության իրագործման համար անհրաժեշտ հիմքերի ստեղծում | 1.1 «Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակում» 2017-2024 թվականների ծրագրի շրջանակներում՝ միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում | Վայոց ձորի, Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Գեղարքունիքի մարզերի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթեր | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Էկոնոմիկայի նախարարություն<br><br>Ճարտարապետների պալատ (համաձայնությամբ) | 2021թ. – 01.07.2024թ. | Պետական բյուջե 2021թ.՝ 199.936,0 հազ. դրամ, 2022թ.՝ 464.684,0 հազ. դրամ, 2023թ.՝ 267.671,0 հազ. դրամ 2024թ. Համաձայն ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով հաստատված չափաքանակների |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 1.2. «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության նախագծի մշակում | Սևանա լճի ռեկրեացիոն գոտում ներդրումների համար բարենպաստ պայմանների ստեղծում | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Ճարտարապետների պալատ (համաձայնությամբ)<br><br>Շրջակա միջավայրի նախարարություն<br><br>Էկոնոմիկայի նախարարություն<br><br>«Սևան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն (համաձայնությամբ) | 2021թ. - 2022թ. 1-ին կիսամյակի ավարտ | Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում (անհրաժեշտ 43.000,0 հազ. դրամը հատկացվել է 2020թ.) |
| | | 1.3. Սահմանամերձ համայնքներում քաղաքաշինական գործունեությանն աջակցություն | Միկրոռեգիոնալ փաստաթղթերի շրջանակներում հաստատված առաջարկությունների հիման վրա կառուցապատման ներդրումային ծրագրերի փաթեթների մշակման միջոցով սահմանամերձ համայնքների քաղաքաշինական հիմնախնդիրների լուծում, անվտանգ կենսամիջավայրի ապահովում, ժողովրդագրական ցուցանիշների բարելավում | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Էկոնոմիկայի նախարարություն<br><br>Մարզպետարաններ (բացառությամբ՝ Կոտայքի մարզպետարանի) | 2021թ. - 2026թ. 1-ին եռամսյակ | Ֆինանսավորման չափը և աղբյուրները կճշտվեն ներդրումային փաթեթները Կառավարության կողմից հավանության արժանանալուց հետո |
| | | 1.4. ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի առաջադրանքի և գլխավոր նախագծի մշակում | Ազգային և տեղական մակարդակի փաստաթղթերի (տարաբնակեցման և տարածքային կազմակերպման, քաղաքաշինական մանրամասն | Վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական | Գլխավոր նախագծի առաջադրանքի մշակում՝ 2024թ. դեկտեմբերի 2-րդ | Նախագծի առաջադրանքի մշակումը ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | գոտևորման) հաջորդական մշակման և դրա հիման վրա տարածական արդյունավետ պլանավորման միջոցով երկրի կայուն տարածական զարգացման ռազմավարության մշակում՝ հաշվի առնելով սոցիալ-տնտեսական գործոնները, ինժեներաերկրաբանական, ինժեներատրանսպորտային, բնական պայմանների ու պաշարների, էկոլոգիական իրավիճակի, մշակութային ժառանգության, աշխարհագրական ու տարածաշրջանային այլ առանձնահատկությունները | հանձնաժողովի կազմում ընդգրկված մարմիններ<br><br>Պաշտպանության նախարարություն | տասնօրյակ,<br><br>Գլխավոր նախագծի մշակում՝ 2026թ. (շարունակական՝ մինչև 2027թ.) | Պետական բյուջե: Նախագծի մշակման ֆինանսավորման չափը կհստակեցվի առաջադրանքը Կառավարության կողմից հավանության արժանանալուց հետո |
| | | 1.5. «Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Տարածքի հատակագծման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծերի ներկայացում Վարչապետի աշխատակազմ | «Քաղաքաշինության մասին» օրենքում սահմանվում է «տարածքի հատակագծման նախագիծ» հասկացությունը: Տարածքի հատակագծման նախագիծը քաղաքաշինական կարգավորման առավել մանրամասն փաստաթուղթ է, որում ներառված են միջպետական կամ հանրապետական նշանակության ճանապարհներին հարող տարածքների, հատուկ կարգավորման գոտիների, կառուցապատված կամ նոր կառուցապատվող թաղամասերի քաղաքաշինական նորմերին համապատասխան հիմնական չափորոշիչներ, որոնք միևնույն | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Էկոնոմիկայի նախարարություն<br><br>Ճարտարապետների պալատ (համաձայնությամբ) | 2021թ.-2022թ. նոյեմբեր | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ժամանակ նպաստում են տարածքի ներդրումային գրավչության որոշմանը | | | |
| | | 1.6.1. ՀՀ զբոսաշրջային համակարգի տարածքային կազմակերպման գլխավոր նախագիծը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում<br><br>1.6.2. ՀՀ զբոսաշրջային համակարգի տարածքային կազմակերպման գլխավոր նախագծի առաջադրանքի մշակում | Առկա և բարելավվող ռեսուրսային պոտենցիալի համալիր գնահատում, դրանց հիման վրա զբոսաշրջային կայուն համակարգի փոխկապակցված ցանցի ձևավորում՝ ապահովելով ռեսուրսների խնայողական օգտագործումը, տարածքների ռեկրեացիոն տարողունակության գնահատումը, բնական էկոհամակարգերի գերբեռնման կանխումը, առկա ենթակառուցվածքի գնահատումը, բարեփոխման հատակագծային կազմակերպման միասնական ուրվագծի առաջադրումը: | Էկոնոմիկայի նախարարություն | 2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ<br><br>2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| | | 1.7. «Հայաստանի բնակավայրերի պատմական կառուցապատման, ճարտարապետական և բնական ժառանգության վերականգնման, վերակառուցման և վերաօգտագործման քաղաքաշինական կանոնակարգերի մեթոդաբանությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի մշակում | Բնակավայրերի ձևավորված քաղաքաշինական միջավայրերի ճարտարապետական և բնական ժառանգության օբյեկտների նկատմամբ միջամտությունների չափորոշիչների և կարգավորիչների մշակված համակարգ և պահպանված քաղաքաշինական ժառանգություն | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | 2025թ.-2026թ. 1-ին եռամսյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 1.8. Սյունիքի մարզի Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում նոր բնակելի թաղամասի հիմնում | Սյունիքի մարզի Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում սահմանազատման հետևանքով իրենց բնակելի նշանակության գույքերի (այդ թվում՝ հողամասերի և օժանդակ շինությունների) տնօրինման հնարավորությունից զրկված ընտանիքների բնակարանային պայմանների ապահովում՝ թվով 13 առանձնատների կառուցմամբ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Կադաստրի կոմիտե<br><br>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 2021թ.- 2022թ. 3-րդ եռամսյակ | Պետական բյուջե<br><br>Ծրագրի իրականացման համար կնքված պայմանագրերի ընդհանուր գումարը կազմում է՝ 1.200.901,8 հազ. դրամ, որից՝<br>-2021թ.՝ 470.129,8 հազ. դրամ,<br>-2022թ.՝ 730,772.0 հազ. դրամ |
| | | 1.9.1. «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ<br><br>1.9.2. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N728-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ | Մայրաքաղաքի համաչափ տարածական զարգացմանը զուգընթաց Երևանի փոքր կենտրոնի քաղաքաշինական գործունեության առանձնահատկությունների սահմանում, ճարտարապետական կերպարի ինքնության պահպանում, կառուցապատման գեղագիտական միջավայրի կատարելագործում, անվտանգ, գրավիչ և հարմարավետ կենսամիջավայրի կազմավորում: | Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)<br><br>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Կադաստրի կոմիտե | 2023թ. | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. | Քաղաքաշինական թույլտվությունների գործընթացի ամբողջական իրականացում առցանց համակարգի միջոցով | 2.1.Պետական քաղաքաշինական տեղեկատվական համակարգի (քաղաքաշինական կադաստրի) ներդրման ծրագրի իրագործում | Տեխնիկական և ծրագրային ապահովմամբ հանրապետության ողջ տարածքում պետական քաղաքաշինական տեղեկատվական համակարգի ստեղծման միջոցով գործառույթների զգալի մասն իրականացնել էլեկտրոնային միասնական համակարգով՝ օրենսդրական կարգավորման առաջարկների նախանշմամբ և վերջիններիս լուծման ուղղությունների ամրագրմամբ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Էկոնոմիկայի նախարարություն<br><br>Կադաստրի կոմիտե<br><br>Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ<br><br>Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին | 2024թ. | Պետական բյուջե, ԵՄ դրամաշնորհներ<br><br>Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշտվի միջոցառման մշակման ժամանակ՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա |
| 3. | Քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման փուլերի կրճատում և թույլտվություններ պահանջող գործունեության շրջանակի բովանդակային իմաստով վերանայում | 3.1. «ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ | Կառուցապատման սահմանված ընթացակարգերի վերանայում, ընթացակարգերին մասնակից բոլոր մարմինների և կազմակերպությունների հետ ինտեգրված միասնական էլեկտրոնային «e-permits» համակարգի միջոցով ընթացակարգերի կազմակերպում: Համակարգը թույլ կտա նաև իրականացնել գործընթացների մոնիթորինգը և այն կծառայի որպես շինարարության բնագավառի | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br><br>Էկոնոմիկայի նախարարություն<br><br>Կադաստրի կոմիտե | 2022թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | միասնական տեղեկատվական շտեմարան | Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ<br><br>Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին | | |
| | | 3.2. Քաղաքաշինական գործունեության գործընթացների բարելավում | Ակնկալվում է քաղաքաշինական գործընթացների պարզեցում, ընթացակարգերի ժամկետների կրճատում, կրկնվող գործառույթների վերացում: Որպես արդյունք՝ կառուցապատման ոլորտում ներդրումների հոսքի ավելացում և գործարար միջավայրի զարգացում: | Էկոնոմիկայի նախարարություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Շրջակա միջավայրի նախարարություն<br><br>Կադաստրի կոմիտե<br><br>Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ<br><br>Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին | 2022-2026 թ., յուրաքանչյուր տարի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ, ավարտը՝ 2026թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4. | Խոշոր համայնքների համար առցանց հասանելի քաղաքաշինական պահանջներ սահմանող գոտիների քարտեզների հաստատում | 4.1.Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների մուտքերին հարող միջպետական և հանրապետական նշանակության պետական ավտոմոբիլային ճանապարհներին կից հատուկ կարգավորման գոտիների տարածքների կառուցապատման միասնական սխեմաների մշակում | Պետական ավտոմոբիլային ճանապարհների անվտանգության ապահովում, դրանց հարող տարածքների՝ որպես հատուկ կարգավորման քաղաքաշինական օբյեկտների կառուցապատման կանոնակարգում՝ տարածքների քաղաքաշինական դիմագծի ձևավորման հարմարավետ և բարձրարժեք գեղագիտական հատկանիշներով օժտված միջավայրի ձևավորմամբ՝ առաջնահերթ կարգով դիտարկելով Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքները: | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 2025թ. | Պետական բյուջե, ԵՄ դրամաշնորհներ<br><br>Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշտվի միջոցառման մշակման ժամանակ՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա |
| 5. | Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի մշակման, արդիականացման և միջազգային նորմերին ներդաշնակեցման ապահովում՝ ըստ ձևավորվող խնդիրների լուծման առաջնահերթությունների | 5.1. Քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի (տեխնիկական կանոնակարգեր, շինարարական նորմեր, շինարարական նորմերի ու կանոնների հավաքածուներ, կարգեր) մշակման, տեղայնացման, արդիականացման աշխատանքների պատվիրակում կապալառու կազմակերպություններին | • Քաղաքաշինության բնագավառի միջպետական, միջազգային և եվրոպական նորմերին ու ստանդարտներին համահունչ արդիականացված (ըստ ոլորտային առաջնահերթ ուղղությունների) նորմատիվատեխնիկական փաստաթղթեր (սեյսմակայունության, էներգաարդյունավետության, ջրային միջավայրի ազդեցության՝ հիդրոտեխնիկական կառուցվածքների (այդ թվում՝ պոչամբարների) նախագծման, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության, կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության, քաղաքացիական | Արտակարգ իրավիճակների նախարարություն<br><br>Պաշտպանության նախարարություն<br><br>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Առողջապահության նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Շրջակա միջավայրի նախարարություն | 2021թ 4-րդ եռամսյակ-2022թ հունիսի 3-րդ տասնօրյակ<br><br>2022թ հուլիսի 3-րդ տասնօրյակ<br><br>2023թ-2025թ | Պետական բյուջե<br><br>2021թ.՝ 38.805 հազ. դրամ, 2022թ.՝ 110.375 հազ. դրամ, 2023թ.՝ 74.500,0 հազ. դրամ, 2024թ.՝ 77.500,0 հազ. դրամ, 2025-2026թթ. ֆինանս. չափը կհստակեցվի ՄԺԾԾ-ով<br><br>Փաստաթղթերի մշակման աշխատանքների համար նախատեսվող ծախսերի բաշխումը |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | պաշտպանության և այլ պահանջների ապահովմամբ)<br><br>• Քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համալրված բազա<br><br>• 2023-2026թթ պետական բյուջեների միջոցների հաշվին կառուցված/ վերակառուցված, որակական բարձր ցուցանիշ ունեցող քաղաքաշինական օբյեկտներ՝ ըստ հաստատված թվաքանակի | Էկոնոմիկայի նախարարություն<br><br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | 4-րդ եռամսյակներ, 2026թ՝ շարունակական | հիմնականում կատարվում է երկփուլ սկզբունքով՝ կանխավճարի տրամադրում մինչև առաջին բյուջետային տարվա ավարտը և հաջորդ տարվա առաջին եռամսյակում՝ աշխատանքների ամբողջական ֆինանսավորում |
| | | 5.2. Շինարարության գնագոյացման մեթոդաբանության արդիականացմանն ուղղված առաջարկությունների փաթեթի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ | Շինարարության գնագոյացման մեթոդաբանության ոչ արդիական (դեռևս խորհրդային ժամանակաշրջանի) մեթոդների փոխարեն նոր՝ ժամանակակից պահանջներին համապատասխանող մեթոդաբանության ներդրման ճանապարհային քարտեզի մշակում,<br>վերանայման ենթակա օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի շրջանակի սահմանում | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Էկոնոմիկայի նախարարություն<br><br>Հայաստանի շինարարների միություն (համաձայնությամբ)<br><br>«Կառուցապատողների հայկական ասոցիացիա» ՀԿ (համաձայնությամբ)<br><br>Ճարտարապետության և շինարարության | 2022թ. հունիսի 30 | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | ազգային համալսարան (համաձայնությամբ) | | |
| | | 5.3.«Բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի ցանկը և ընդհանուր բնութագրերը հաստատելու մասին» Քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանի նախագծի մշակում (Նախագծի մշակման և համակարգման աշխատանքներ, ծրագրային առաջարկների մշակում բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի տեղակայման, փորձաքննության և բյուջետային ծրագրերի շրջանակներում նմանատիպ նախագծերի ձեռքբերման համար ֆինանսական միջոցների նախատեսման վերաբերյալ) | • Կրթական, առողջապահական, բնակելի, գյուղատնտեսական և հասարակական այլ նշանակության օբյեկտների բազմակի օգտագործման ընդհանուր թվով 12 օրինակելի նախագծերի հաստատված ցանկ և բնութագրեր<br><br>• Բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի հիմքով՝ բյուջետային և ՄԺԾ ծրագրերի հիմնավորում, նոր մշակված օրինակելի նախագծերով ցանկի պարբերաբար համալրում ՝ Կառավարության 2012 թվականի հունիսի 7-ի N 814-Ն որոշման համաձայն<br><br>• Տեղակայվող օրինակելի նախագծերով քաղաքաշինական ծրագրերի ներդրում, ծրագրերի ընդհանուր տևողության մինչև 30%-40% և | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Առողջապահության նախարարություն<br><br>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>Պաշտպանության նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Էկոնոմիկայի նախարարություն | 2021թ 4-րդ եռամսյակ<br><br>2021թ 4-րդ եռամսյակ - 2022թ շարունակական<br><br>2022թ 2-րդ կիսամյակ - 2023թ շարունակական | Ֆինանսավորում չի պահանջվում<br><br>Ֆինանսավորում չի պահանջվում<br><br>Պետական բյուջե Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշգրտվի հաստատված ծախսային |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | նախագծային աշխատանքների արժեքի շուրջ 60%-70%-ով նվազում | | | ծրագրերի շրջանակներում՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա (օրինակ՝ միջին ծավալով ընդունված շուրջ 15.000,0 հազ. դրամ արժեքով մեկ նախագծի տեղակայման ծախսերը կկազմեն շուրջ 15.000,0 x 30% = 4.500,0 հազ. դրամ) |
| | | 5.4.«Միասնական փաթեթով գնում» սկզբունքի կիրառման համար օրենսդրական կարգավորումների մշակում՝ «Քաղաքաշինության մասին օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ (Նախագծի մշակում և համակարգում, օրենսդրական այլ իրավակարգավորումների մասով առաջարկների ներկայացում՝ նախագծային աշխատանքների փուլայնության (տրոհման), կրկնակի և ուղեկցող փորձաքննության մեթոդաբանությունների | • Սահմանված կարգով ընդունված օրենսդրական առաջնահերթ կարգավորումներ<br><br>• Քաղաքաշինության բնագավառի քաղաքականությանը և ռազմավարական խնդիրներին համապատասխան պլանավորված կառուցապատման (հրատապ) մեծածավալ ծրագրեր պետական բյուջեների և ՄԺԾ ծրագրերի նախագծերով<br><br>• «Հրատապ» որակված ծրագրերի պատվիրակում մեկ կապալառուի՝ «պարզեցված» ու միաժամանակյա գնում շինարարական ծրագրի | Ֆինանսների նախարարություն<br><br>Պետական կառավարման մարմիններ<br><br>Տեղական ինքնակառավարման մարմիններ (Երևանի քաղաքապետարան) համաձայնությամբ | 2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ<br><br>2022թ, սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ<br><br>2022թ նոյեմբերի 3-րդ տասնօրյակ, 2023թ.-2026թ. (շարունակական) | Ֆինանսավորում չի պահանջվում<br><br>Ֆինանսավորում չի պահանջվում<br><br>Պետական բյուջե Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշգրտվի հաստատված ծախսային |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | հստակեցման մասով, հատուկ ընթացակարգերի մշակում) | ամբողջական փաթեթով սկզբունքի կիրառում՝ նախագիծ, փորձաքննություն, խորհրդատվական ծառայություններ, շինարարություն | | | ծրագրերի շրջանակներում՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա (օրինակ՝ 1 փաթեթի շրջանակներում միջին ծավալով շուրջ 1.500.000,0 հազ. դրամ (այդ թվում՝ հեղինակային և տեխնիկական հսկողությունները) արժեքով շինարարական օբյեկտի ձեռքբերման համար կպահանջվեն հետևյալ ծախսերը՝ նախագիծ (1.7%)՝ ≈ 25.500,0 հազ. դրամ, փորձաքննություն (6%)՝ ≈ 1.500,0 հազ. դրամ, ∑=1.500.000,0+25.500,0+1.500,0≈**1.527.000,0 հազ.դրամ**) |
| 6. | Շինարարությունում նոր տեխնոլոգիաների ներդրման, տեղական հումքով շինանյութերի և շինարարության որակի | 6.1.«Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ արդիականացման (առողջացման) ծրագրի | • Վերանայված, արդիականացված օրենսդրություն, փորձագիտական կենտրոնի առողջացման համար մշակված | Էկոնոմիկայի նախարարություն<br><br>Ճարտարապետության և շինարարության | 2022թ հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորման չափը և աղբյուրները կճշտվեն արդիականացման |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | հսկման մեթոդների մշակման ու իրագործման նպատակով գիտահետազոտական և փորձարարական բազայի ձևավորում, գիտական կադրերի պատրաստում (վերապատրաստում) | մշակման պատվիրակում, ծրագրի մշակման աշխատանքների ընթացիկ համակարգում, ծրագրով նախատեսվող միջոցառումների իրականացում (օրենսդրության վերանայում, Կենտրոնի վերակազմակերպման աշխատանքների ապահովում, կանոնադրական նոր պահանջների ձևավորում, մասնագիտական կադրերի ընտրություն, ներգրավում) | ծրագիր (ծրագրով նախատեսվող առաջնահերթ միջոցառումներ Կենտրոնին վերապահվող գործառույթների իրականացման, պարտավորությունների և իրավունքների հստակեցման, պետական մարմինների պատվիրակմամբ քաղաքաշինության բնագավառում բացահայտված խնդիրների արագընթաց ուսումնասիրության, մասնագիտական եզրակացությունների տրամադրման հնարավոր իրավակարգավորումների նախատեսում, անհրաժեշտ լիազորությունների վերապահում, օրինակ՝ շենքերի/շինությունների տեխնիկական վիճակի հետազննման ծառայություններ, նախագծային փաստաթղթերի ուսումնասիրություններ, լրամշակումներ, կրկնակի և ուղեկցող պետական փորձաքննություններ և այլն)<br><br>•վերանայված կանոնադրություն, ներգրավված ինժեներատեխնիկական ռեսուրս | Հայաստանի ազգային համալսարան (համաձայնությամբ)<br><br>Հայաստանի շինարարների միություն (համաձայնությամբ) | 2022թ դեկտեմբերի 1-ին տասնօրյակից մինչև 2023թ 1-ին կիսամյակ<br><br>2023թ 2-րդ կիսամյակ-2026թ (շարունակական) | (տեխնիկական վերազինման) ծրագիրը Կառավարության կողմից հաստատվելուց հետո |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | • Քաղաքաշինության բնագավառում գիտական, գիտահետազոտական և փորձարարական ուսումնասիրությունների կատարման համար արդի պայմաններ, համախմբված ինժեներատեխնիկական ռեսուրս, բնագավառի գիտատեխնիկական և նոր տեխնոլոգիաների ներդրման քաղաքականության հիմնավորում, քաղաքաշինական խնդիրների արագընթաց ուսումնասիրություններ, քաղաքաշինական փաստաթղթերի կրկնակի և ուղեկցող փորձաքննություններ, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման աշխատանքներ, մասնագիտական եզրակացություններ և այլն | | | |
| 7. | Շենքերի ու շինությունների հուսալիության և սեյսմակայունության բարձրացման համար անհրաժեշտ իրավական հիմքերով ապահովում | 7.1.«Տեխնիկական վիճակից ելնելով բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերը/շինությունները շահագործման համար ոչ պիտանի (կազմաքանդման ենթակա) ճանաչելու կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ | • Հաստատված կարգ<br><br>• Հաստատված միջոցառումների ծրագիր՝ ըստ առաջնահերթությունների ժամանակացույցի<br><br>• Տեխնիկական վիճակից ելնելով շենքերը/շինությունները շահագործման համար ոչ պիտանի (կազմաքանդման ենթակա) ճանաչելու | Արտակարգ իրավիճակների նախարարություն Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 2022թ մարտի 3-րդ տասնօրյակ<br><br>2022թ հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ<br><br>2023թ հունիսի 3-րդ տասնօրյակից մինչև 2026թ շարունակական | Իրավակարգավորումների մասով ֆինանսավորում չի պահանջվում<br><br>Պետական բյուջե Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշտվի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | գործընթացի մեկնարկ՝ ըստ միջոցառումների ծրագրի, փուլային սկզբունքով | Տեղական ինքնակառավարման մարմիններ (Երևանի քաղաքապետարան) համաձայնությամբ | | միջոցառման մշակման ժամանակ՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա (1քմ մակերեսի քանդման աշխատանքները գնահատվում են մինչև 50.0 հազ. դրամ, միջին շինության 1000քմ մակերեսի համարժախսը կկազմի 50.000,0 հազ. դրամ) |
| | | 7.2.Առավել վտանգավոր սողանքային տեղամասերում հետազննությունների և կանխարգելիչ միջոցառումների մասով առաջարկությունների ներկայացում, «ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» Քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանի նախագծի մշակում (քաղաքաշինական օբյեկտների նախագծման նորմատիվ լրացուցիչ պահանջների մշակում՝ հրամանի համալրում | • Առաջարկությունների ամփոփված փաթեթ, լրամշակված գերատեսչական իրավական ակտ<br><br>• Քաղաքաշինական օբյեկտների նախագծային փաստաթղթերի մշակման համար նոր լրացուցիչ պահանջներով համալրված ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքներ<br><br>• Հակասողանքային/ կանխարգելիչ, ուղեկցող միջոցառումներով հաստատված քաղաքաշինական ծրագրեր, ծրագրերի մեկնարկ | Արտակարգ իրավիճակների նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Տեղական ինքնակառավարման մարմիններ Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան համաձայնությամբ | 2022թ 3-րդ եռամսյակ<br><br>2022թ 4-րդ եռամսյակ-2023թ շարունակական<br><br>2023թ 4-րդ եռամսյակ-2026թ շարունակական | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | հակաստղանքային, կանխարգելիչ միջոցառումների դրույթներով, նորամշակ պահանջների մասով իրազեկման ապահովում) | | | | |
| 8. | Կարևորագույն նշանակության մի շարք օբյեկտների համալրում նախագծային հատուկ լուծումներով՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար դրանց շահագործման մատչելիությունն ապահովելու համար | 8.1.«Նախագծային հատուկ լուծումներով համալրման ենթակա մի շարք կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկը և դրանց շահագործման մատչելիությունն ապահովող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ (Նախագծի մշակման և համակարգման աշխատանքներ) | • Նախագծային հատուկ լուծումներով համալրման ենթակա թվով 20 կարևորագույն նշանակության օբյեկտների հաստատված ցանկ և միջոցառումների ծրագիր<br><br>• Միջոցառումների ծրագրով նախատեսված փուլային աշխատանքների մեկնարկ<br><br>• Հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի շահագործման մատչելիությունն ապահովող և հաջորդաբար իրականացվող միջոցառումներ ՝ թվով 20 կարևորագույն օբյեկտներում | Պետական կառավարման մարմիններ<br><br>Տեղական ինքնակառավարման մարմիններ<br><br>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | 2021թ 4-րդ եռամսյակ-2022թ 2-րդ կիսամյակ<br><br>2023թ 1-ին կիսամյակից<br><br>2024թ 1-ին կիսամյակից մինչև 2026թ շարունական | Իրավակարգավոր ումների մասով ֆինանսավորում չի պահանջվում<br><br>Պետական բյուջե Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշտվի հաստատված ծախսային ծրագրերի շրջանակներում՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա (թեքահարթակներ ի, շարժասանդուղքի, վերելակի և առանձնացված սանհանգույցների համար կպահանջվի շուրջ 20.000,0 հազ. դրամ) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 9. | Շենքերի ու շինությունների անձնագրավորման համակարգի ներդրում | 9.1.«Քաղաքաշինության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին նախագծերի փաթեթին հավանություն տալու, «Շենքերի և շինությունների անձնագրավորման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշումների նախագծերի ներկայացում Վարչապետի աշխատակազմ (իրավական ակտերի, միջոցառումների ծրագրի նախագծերի մշակման աշխատանքներ, անձնագրավորման կարգի մշակման աշխատանքներ, ծրագրի իրագործման համակարգում, համագործակցություն պատասխանատու  և այլ շահագրգիռ մարմինների հետ) | • Ընդունված օրենսդրական փոփոխություններ և հաստատված անձնագրավորման կարգ<br><br>• Պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցված և հաստատված միջոցառումների ծրագիր՝ ըստ առաջնահերթությունների կազմված ժամանակացույց<br><br>• Նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի և շինությունների անձնագրավորման գործընթացի մեկնարկ՝ ըստ միջոցառումների ծրագրի, փուլային սկզբունքով | Արտակարգ իրավիճակների նախարարություն<br><br>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Մարզպետարաններ<br><br>Տեղական ինքնակառավարման մարմիններ (Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) | 2021թ 4-րդ եռամսյակ-2022թ սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ<br><br>2022թ նոյեմբերի 3-րդ տասնօրյակից մինչև 2023թ 1-ին կիսամյակի ավարտ<br><br>2023թ 2-րդ կիսամյակից մինչև 2026թ շարունակական | Իրավակարգավորումների մասով ֆինանսավորում չի պահանջվում<br><br>Պետական բյուջե Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշտվի միջոցառման մշակման ժամանակ՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա (նորակառույցների անձնագրավորման համար ֆինանսավորում չի նախատեսվում, իսկ գոյություն ունեցող շենքերի համար՝ մեկ շենքի անձնագրավորման համար ըստ խոշորացված հաշվարկի կպահանջվի 3.000,0-5.000,0 հազ. դրամ) |
| 10 | Քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող | 10.1. «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», | Նախագծի ընդունմամբ ակնկալվում է քաղաքաշինության բնագավառում լիցենզավորվող | Վարչապետի աշխատակազմ տեսչական մարմինների | 2021թ. | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կազմակերպությունների վարկանիշավորման համակարգի ներդրում | «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի ներկայացում Վարչապետի աշխատակազմ: | տնտեսավարող սուբյեկտների համար ձևավորել հստակ, բարենպաստ և ամբողջական իրավական միջավայր: | աշխատանքների համակարգման գրասենյակ<br><br>Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին | | |
| | | 10.2. «Լիցենզիանզավորման, մասնագետների հավաստագրման, թեստավորման, մասնագետների և կազմակերպությունների ռեգիստրի ձևավորման և կառուցվածքի վարման կարգերը հաստատելու մասին», ինչպես նաև «Մասնագետների շարունակական մասնագիտական զարգացման հնգամյա ժամանակացույցը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծերի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ | Ստեղծել տնտեսավարող սուբյեկտների համար հավասար մրցակցային դաշտ, ինչպես նաև բարձրացնել մասնագիտական որակավորման պահանջներն ու պատասխանատվությունը: Օրենքով սահմանված Քաղաքաշինական փաստաթղթերի կազմի և բովանդակության, ինչպես նաև քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներին և դասակարգմանը համապատասխան լիցենզավորման միասնական կարգի ստեղծում: Շարունակական մասնագիտական զարգացման | Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br><br>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ<br><br>Քաղաքաշինության, տեխնիկական և | 10.1-ին կետով նախատեսված օրենքների պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամսվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | |
